



Թուրքիայի կառավարության կողմից Հայոց ցեղասպանության հերքումը ստվեր է գցում այդ երկրի բարոյական հեղինակության վրա:

The Huffington Post-ում հրապարակված իր հոդվածում նշել է Կոլումբիայի համալսարանի Մարդու իրավունքների ամբիոնի դասախոս Դեյվիդ Ֆիլիփսը: Հոդվածագիրն անդրադարձել է հայ-թուրքական հարաբերությունների բարելավման և սահմանի բացման առավելություններին և ընդգծել, որ ապրիլի 24-ի հիշատակի օրվա առթիվ Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը պետք է ներողություն խնդրի Օսմանյան կայսրության վերջին օրերին հայերի հետ կատարվածի համար: «Պատմությունը վերաշարադրելու փոխարեն՝ Էրդողանը կարող է կերտել այն՝ բացելով սահմանը, կարգավորելով Հայաստանի հետ առևտային հարաբերությունները և հաստատելով դիվանագիտական հարաբերություններ: Ավելի համարձակ գտնվելով՝ նա կարող է հայ-թուրքական արձանագրությունների վավերացման և դիվանագիտական հարաբերությունների կարգավորման հարցը բարձրացնել խորհրդարանում: Հայաստանի հետ հարաբերությունների հաստատումը Թուրքիային կօգնի ամրապնդել իր դերը տարածաշրջանում որպես գերտերություն», - նշված է հոդվածում:

Ֆիլիփսը նաև առաջարկում է Թուրքիայի վարչապետին հորդորել խորհրդարանին՝ ուժը կորցրած ճանաչել Քրեական օրենսգրքի՝ «թուրքականությունը զրպարտելը» քրեականացնող 301 հոդվածը, որը հակասում է խոսքի ազատության սկզբունքներին: «Չեղյալ հայտարարելով հետադիմական օրենսդրությունը՝ թուրք հասարակությունն ավելի ազատ կդառնա: Դա կնպաստի նաև Եվրամիության անդամակցության գործընթացին», -վստահ է ամերիկացի փորձագետը:

Նա նկատում է, որ Հայաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերությունների բացակայությունն, այնուամենայնիվ, չի խանգարել, որ երկու ժողովուրդների միջև միջսահմանային առևտրատնտեսական համագործակցություն ձևավորվի: «Երկու պետությունների միջև ավելի բարձր մակարդակի փոխշահավետ համագործակցություն ևս հնարավոր է», - նկատում է հոդվածագիրը: Հայաստանը կարող է էլեկտրաէներգիա արտահանել Թուրքիա, օգտվել Թուրքիայի գերժամանակակից օպիտիկամանրաթելային մալուխից՝ ինտենետի աճող պահանջները բավարարելու համար: Սահմանի բացման արդյունքում հնարավոր կլինի վերագործարկել ճանապարհատրանսպորտային հաղորդակցությունը՝ Կարս-Գյումրի երկաթգիծը, Երևան- Վան ավիաչվերթները, Անիի կամուրջը: Ավելին, երկու երկրների միջև հնարավոր կլինի ստեղծել ազատ առևտրատնտեսական գոտի: Այսինքն՝ Հայաստանը և Թուրքիան կկարողանան, որպես տարանցիկ երկիր, բեռներ փոխադրել միմյանց տարածքով: Կարգավորված առևտուրը և ճանապարհատրանսպորտային հաղորդակցությունը կնպաստեն նաև տուրիզմի զարգացմանը:

Հայ-թուրքական երկու արձանագրությունները ստորագրվել էին 2009թ. հոկտեմբերի 10-ին Ցյուրիխում՝ Հայաստանի եւ Թուրքիայի արտաքին գործերի նախարարներ Էդվարդ Նալբանդյանի եւ Ահմեդ Դավութօղլուի կողմից: Թուրքիայի խորհրդարանը հրաժարվում է վավերացնել արձանագրությունները: